ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 14-Ա05

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 03.10.2025թ. նիստի

ք.Երևան 03.10.2025թ.

Նիստին մասնակցում էին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վահրամ Ապրեսյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը Գարիկ Մկրտչյանը, Խաչատուր Ղահրամանյանը, Վարազդատ Ասատրյանը, Անդրանիկ Ելինյանը /նիստի քարտուղար/ ։

Արձանագրվեց, որ ներկա են խորհրդի 7 /յոթ/ անդամներ, քվորումն ապահովված է, և դիտորդ խորհուրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. «ՍԳԿԿ» ԻԿ տարեկան Ընդհանուր ժողովի կազմակերպման, անցկացման և օրակարգի մասին հարցի քննարկում:

Տիգրան Սահակյանը հայտնեց, որ անհրաժեշտություն է առաջացել տարեկան հաշվետվությունների և հաջորդ տարվա բյուջեի քննարկման նպատակով հրավիրել տարեկան ժողով:

Հավելեց, որ կազմակերպության կանոնադրությունում առկա չէ հեռավար ժողով հրավիրելու հարցը կարգավորող նորմ, ինչը հաշվի առնելով գտնում է, որ նման հնարավորություն ստեղծելը կթեթևացնի ժողովների հրավիրման ընթացակարգն ու կնվազեցնի ծախսերը:

Հայտնեց նաև, որ անարդար է, երբ բոլոր կառավարիչները ունեն գործեր վարելու հավասար հնարավորություն, սակայն անդամավճարները վճարվում են տարբեր մոտեցումներով՝ 65 տարին լրացած անձինք վճարում են ամսական անդամավճարի 10 տոկոսը: Գտնում է, որ այս հարցը պետք է վերանայվի՝ կարգում պետք է կատարվի համապատասխան փոփոխություն, որի վերաբերյալ որոշում կայացնողը ժողովն է:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի մյուս 6 անդամները:

Լևոն Պետրոսյանը հայտնեց, որ ինքը համաձայն է օրակարգում ներառված հարցերի հետ, բացառությամբ 65 տարին լրացած անձանց անդամավճարի չափի փոփոխության հարցի:

Խորհրդի մյուս անդամները հավանություն տվեցին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանի առաջարկին և առաջարկեցին տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընգրկել հետևյալ հարցերը՝

1.«ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2024թ.-01.11.2025թ ֆինանսական հաշվետվությունը:

2. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Վերահսկիչ ծառայության հաշվետվությունը:

3. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը:

4. «ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2025թ.-01.11.2026թ. բյուջեի հաստատում:

5.«ՍԳԿԿ» ԻԿ-ի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ /տարեկան Ընդհանուր ժողովը հարցման եղանակով իրականացնելու համար/ կատարելու հարցի քննարկում:

6. ՍԳԿԿ» ԻԿ-ի «Ընդհանուր ժողովի գործունեության կարգ»-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հարցի քննարկում:

7.«ՍԳԿԿ» ԻԿ-ի «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգ»-ի մեջ փոփոխություններ /65 տարին լրացած կառավարիչների ամսական անդամավճարների վերաբերյալ/ կատարելու հարցի քննարկում:

8. Ընթացիկ հարցեր:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովը 22.11.2025թ. անցկացման հարցը և օրակարգում ընդգրկելու համար հետևյալ հարցերը՝

1.«ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2024թ.-01.11.2025թ ֆինանսական հաշվետվությունը:

2. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Վերահսկիչ ծառայության հաշվետվությունը:

3. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը:

4. «ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2025թ.-01.11.2026թ. բյուջեի հաստատում:

5.«ՍԳԿԿ» ԻԿ-ի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ /տարեկան Ընդհանուր ժողովը հարցման եղանակով իրականացնելու համար/ կատարելու հարցի քննարկում:

6. ՍԳԿԿ» ԻԿ-ի «Ընդհանուր ժողովի գործունեության կարգ»-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հարցի քննարկում:

7.«ՍԳԿԿ» ԻԿ-ի «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգ»-ի մեջ փոփոխություններ /65 տարին լրացած կառավարիչների ամսական անդամավճարների վերաբերյալ/ կատարելու հարցի քննարկում:

8. Ընթացիկ հարցեր:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | □ Կողմ / □ Դեմ V | Դեմ է միայն 65 տարին լրացած անձանց կողմից վճարվող անդամավճարների չափի ավելացման հարցին |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

Որոշում 1. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացնել 2025թ. նոյեմբերի 22-ին և հաստատել օրկարգի հետևյալ հարցերը՝

1.«ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2024թ.-01.11.2025թ ֆինանսական հաշվետվությունը:

2. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Վերահսկիչ ծառայության հաշվետվությունը:

3. «ՍԳԿԿ» ԻԿ-ի Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը:

4. «ՍԳԿԿ» ԻԿ-ի 01.11.2025թ.-01.11.2026թ. բյուջեի հաստատում:

5.«ՍԳԿԿ» ԻԿ-ի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ /տարեկան Ընդհանուր ժողովը հարցման եղանակով իրականացնելու համար/ կատարելու հարցի քննարկում:

6. ՍԳԿԿ» ԻԿ-ի «Ընդհանուր ժողովի գործունեության կարգ»-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հարցի քննարկում:

7.«ՍԳԿԿ» ԻԿ-ի «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգ»-ի մեջ փոփոխություններ /65 տարին լրացած կառավարիչների ամսական անդամավճարների վերաբերյալ/ կատարելու հարցի քննարկում:

8. Ընթացիկ հարցեր:

2.Վերապատրաստման դասընթացների կազմակերպման և անցկացման հարցի քննարկում:

Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ դասընթացի ծրագիրը կազմելու նպատակով հարցումներ են կատարվել տարբեր մարմինների, բոլոր կառավարիչներին: Ստացվել են պատասխաններ, կառավարիչները գերակշիռ մեծամասնությամբ պասիվ են եղել առաջարկ ներկայացնելու հարցում: Հավելեց, որ մինչ խորհրդի նիստի օրը, անցկացվել են 3 ժամ տևողությամբ դասընթացներ, սահմանված ժամաքանակը լրացնելու համար մնացել է 21 ժամ:

Ներկայացրեց դասընթացների ծրագիրը, որի վերաբերյալ վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի մյուս 6 անդամները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց ՝Վերապատրաստման դասընթացների ծրագիրը հետևյալ բովանդակությամբ՝

1. Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն - 6 ակադեմիական ժամ: Գործողություններ են կատարվում բարձր որակավորում ունեցող մասնագետ ներգրավելու ուղղությամբ:

2. Կառավարչի կողմից ներկայացվող հաշվետվություններ - 2 ակադեմիկան ժամ- դասախոս՝ Տիգրան Սահակյան

3. Գույքերի իրացումից առաջացած հարկերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՀՀ ՊԵԿ-ին - 1 ակադեմիական ժամ- դասախոս՝ Արտյոմ Ղազարյան

4. ՀՀ ՊԵԿ ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվություն օգտագործումը ֆինանսական վիճակի վերլուծության նպատակով - 2 ակադեմիական ժամ – դասախոս՝ Արտյոմ Ղազարյան

5. Կառավարչի կողմից տեղեկատվության հավաքագրման ինտերնետային ռեսուրսներ - 2 ակադեմիական ժամ- դասախոս՝ Վահագն Դավթյան

6. Գույքագրման աշխատանքների կազմակերպում - 1 ակադեմիական ժամ – դասախոս՝ Վահրամ Ապրեսյան
7. Բաշխման ծրագրերի կազմում - 1 ակադեմիական ժամ – դասախոս Վահրամ Ապրեսյան
8. Պարտապանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքում վերջինիս բաժնեմասի վաճառքը - 1 ակադեմիական ժամ – դասախոս՝ Վահրամ Ապրեսյան
9. Պարտապանի ակտիվների հավաքագրման նպատակով ներկայացվող հայցադիմումներ - 3 ակադեմիական ժամ- դասախոս՝ Նարեկ Խաչիկյան
10. Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոններ - 2 ակադեմիական ժամ – դասախոս՝ Արման Սարգսյան

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

| | |
|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Խաչատուր Ղահրամանյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ |

Որոշում 2 Հաստատել վերապատրաստման դասընթացների ծրագիրը վերը նշված բովանդակությամբ:

3. Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ որոշ կառավարիչներ ակտիվ մասնակցություն են ունեցել օրենսգրքի նախագծի վերաբերյալ կառավարիչների համայնքի գրավոր դիրքորոշման մշակման հարցում: Հավելեց, որ Վահրամ Ապրեսյանը աչքի է ընկնում համայնքում առկա խնդիրների, հատկապես՝ օրենսդրության կատարելագործման հարցում առաջարկությունների ներկայացմամբ: Նշվածը հաշվի առնելով առաջարկեց, ցուցաբերված ակտիվության և կատարված աշխատանքների համար պարգևատրել թվով 8 կառավարիչների, յուրաքանչյուրին 100 հազ դրամի չափով, իսկ Վահրամ Ապրեսյանին՝ ևս 100 հազ դրամի չափով (ընդհանուր՝ 200 հազ դրամ):

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի մյուս 6 անդամները, Վարազդատ Ասատրյանը խնդրեց, որպեսզի իրեն անունը հանվի պարգևատրվողների ցուցակից:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց ներքոնշյալ կառավարիչներին պարգևատրելու հարցը՝

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Գումարի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Ապրեսյան Վահրամ | 200.000 |
| 2 | Խաչիկյան Նարեկ | 100.000 |
| 3 | Սարգսյան Լուսինե | 100.000 |
| 4 | Մարտիրոսյան Արտակ | 100.000 |
| 5 | Հարությունյան Վարազդատ | 100.000 |
| 6 | Դավթյան Վահագն | 100.000 |
| 7 | Սարգսյան Արման | 100.000 |

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

| | |
|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Խաչատուր Ղահրամանյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ |

Որոշում 3. «Սնանկության մասին» ՀՀ օրենսգրքի մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու համար պարգևատրել հետևյալ կառավարիչներին՝

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Գումարի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Ապրեսյան Վահրամ | 200.000 |
| 2 | Խաչիկյան Նարեկ | 100.000 |

| | | |
|---|---|---|
| 3 | Սարգսյան Լուսինե | 100.000 |
| 4 | Մարտիրոսյան Արտակ | 100.000 |
| 5 | Հարությունյան Վարազդատ | 100.000 |
| 6 | Դավթյան Վահագն | 100.000 |
| 7 | Սարգսյան Արման | 100.000 |

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Անդրանիկ Եղինյան